ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ՛ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածով՝ ներքոստորագրյալ պատգամավորներս առաջարկում ենք Ձեզ 2024թ-ի ապրիլի 16-ին՝ ժամը 11:00-ին, գումարել Ազգային ժողովի արտահերթ նիստ:

1. Հետևյալ օրակարգով՝

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0),

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում)

2. Արտահերթ նիստ նախաձեռնողների ներկայացուցիչն է պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը:

3. Կից ներկայացնում ենք «2024 թվականի ապրիլի 16-ին ժամը 11:00-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը, ինչպես նաև «2024 թվականի ապրիլի 16-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու և նիստի օրակարգում ընդգրկված «Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին»

օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը երկու ընթեցմամբ քննարկելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին» «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2024 թվականի ապրիլի 16-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված հարցի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացում:

Նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները եւ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

N	Անուն/Ազգանուն	Ստորագրություն	Այլ նշումներ
1	Սուքիասյան Խաչատուր		
2	Նազարյան Լենա		002
3	Սիմոնյան Ալեն		
4	Դավոյան Արփինե		
5	Թորոսյան Արսեն		
6	Թումասյան Միքայել		006
7	Ռուբինյան Ռուբեն		
8	Արսենյան Գուրգեն		
9	Մելքոնյան Գուրգեն		
10	Արշակյան Հակոբ		010
11	Տիգրանյան Հերիքնազ		
12	Կոնջորյան Հայկ		012
13	Ջուլհակյան Արուսյակ		013
14	Աղաջանյան Էդուարդ		014
15	Քոչարյան Անդրանիկ		
16	Կարապետյան Մարիա		016
17	Թունյան Բաբկեն		
18	Թորոսյան Շիրակ		
19	Վարդանյան Ծովինար		019
20	Առուշանյան Դավիթ		020
21	Կարապետյան Դավիթ		021
22	Գրիգորյան Հռիփսիմե		022
23	Քլոյան Անուշ		023
24	Վարդանյան Վլադիմիր		024

25	Ղազարյան Սոնա		
26	Բաթոյան Զարուհի		026
27	Ստեփանյան Լիլիթ		027
28	Համբարձումյան Կարեն		028
29	Գաբրիելյան Վիլեն		029
30	Գալստյան Մերի		030
31	Գաբրիելյան Սիսակ		
32	Խաչատրյան Արմեն		032
33	Գասպարյան Տաթևիկ		
34	Հակոբյան Վաղարշակ		034
35	Սարգսյան Հայկ		
36	Մանավազյան Արուսյակ		
37	Բագրատյան Սերգեյ		
38	Ղազարյան Թագուհի		
39	Հակոբյան Հրաչյա		039
40	Պարսիկյան Տիգրան		040
41	Բաղալյան Լուսինե		
42	Ղալումյան Վահե		
43	Հակոբյան Էդգար		043
44	Պողոսյան Քրիստինե		044
45	Կիրակոսյան Լիլիթ		
46	Եղոյան Արման		
47	Ղազարյան Ալխաս		047
48	Սարգսյան Տրդատ		
49	Մկրտչյան Արեն		
50	Ղազարյան Մարինա		050
51	Զեյնալյան Նարեկ		052

52	Հովհաննիսյան Արթուր		
53	Եղիազարյան Գայանե		
54	Աղազարյան Հովիկ		054
55	Բաբայան Նարեկ		
56	Պալյան Էմմա		
57	Ասլանյան Հակոբ		057
58	Մինասյան Լիլիթ		
59	Գրիգորյան Նարեկ		059
60	Ալեքսանյան Վահագն		
61	Հակոբյան Հասմիկ		
62	Ղահրամանյան Նարեկ		062
63	Դանիելյան Դավիթ		
64	Պողոսյան Մարիամ		064
65	Սարուխանյան Կարեն		
66	Խանդանյան Սարգիս		066
67	Հունանյան Հռիփսիմե		067
68	Ցիրունյան Հայկ		068
69	Բաքոյան Ռուստամ		
70	Սանդիկով Ալեքսեյ		070
71	Հասանով Կնյազ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ՝ ԺԱՄԸ 11:00-ԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ և ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ՈՐՈՇԵՑ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝ 2024 թվականի ապրիլի 16-ին՝ ժամը 11:00-ին, Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու եւ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0) առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը թույլատրում է անհրաժեշտության դեպքում օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկել արտահերթ նիստերում:

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում բացակայում է որեւէ կարգավորում 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

հիշատակի վերաբերյալ, նույն օրենքի 15.1-ին հոդվածի համաձայն՝ Ցեղասպանությունների դատապարտման եւ կանխարգելման օրը նշվում է դեկտեմբերի 9-ին:

Հարկ է նկատել, որ հայ ժողովրդի հետ դարեր շարունակ ապրող եզդի ազգի նկատմամբ 2014թ. «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից կատարված ցեղասպանության դրսեւորումը՝ որպես առանձին հիշատակի օր նշելը եւ այն առանձնացնելը՝ հայ ժողովրդի հետ համատեղ համընդհանուր թշնամու դեմ պայքար մղած ՀՀ ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիների նկատմամբ համերաշխության լրացուցիչ դրսեւորում է, որը կունենա եւ՛ կանխարգելիչ, եւ՛ ըստ էության դատապարտող նշանակություն:

Խնդիրն առավել սրդիական է դառնում նաեւ այն առումով, որ վերջին ժամանակահատվածում նոր թափ է ստացել եզդի ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանությունը ճանաչելու գործընթացը, մասնավորապես՝ 2023թ. հունվարին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը միացավ հանուն պատմական արդարության վերականգնման պայքարին՝ ճանաչելով եւ դատապարտելով 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանությունը:

2023թ. օգոստոսի 1-ին Մեծ Բրիտանիան ճանաչել է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից եզդիների դեմ իրականացված ցեղասպանությունը: Մեծ Բրիտանիայի որոշումը հետեւել է Գերմանիայի արդարադատության դաշնային դատարանի որոշմանը, որն Իսլամական Պետության նախկին մարտիկին մեղավոր է ճանաչել ցեղասպանության եւ ռազմական հանցագործությունների համար: Իսկ

Հայաստանի խորհրդարանը 2014թ. եզդի ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել է դեռեւս 2018թ. հունվարին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

12.04.2024թ.